ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2011 թվականի թիվ 22 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ԵՎ Ն. ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետով.

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուր և Ն. Ծաղկավան համայնքներում համայնքի ղեկավարի հերթական ընտրությունները նշանակել 2011թ. մայիսի 29-ին:

2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.

Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:

3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 ընտրատարածքային ընտրական, ինչպես նաև համայնքների տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. մարտի 01
ք. Իջևան